ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան «05» սեպտեմբեր 2024 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 206-Ա/Ք

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N 140-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը, հաշվի առնելով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 13-ի N 149-Ա/Ք հրամանով ստեղծված Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահին կից աշխատանքային խմբի 2024 թվականի օգոստոսի 21-ի առաջարկությունը և ելնելով ՀՀ պետական բյուջեով նախատեսված հատկացումների չափից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 3-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա գիտական միջոցառումների և երիտասարդ գիտնականների դպրոցների ցանկերը հաստատելու մասին» N 140-Ա/Ք հրամանի հավելվածներում կատարել հետևյալ լրացումները.

1) N 1 հավելվածում գիտական միջոցառումների ցանկը լրացնել հետևյալ կետերով.

21	«Օպտիկան և նրա կիրառությունները» 12-րդ միջազգային սիմպոզիում	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
22	Բարձր էներգիայի աստղաֆիզիկա և տիեզերագիտություն՝ ամբողջ երկնքի դիտումների դարաշրջանում	ՀՀ ԳԱԱ «ԻԿՐԱՆԵՏ կենտրոն» ՄԿ
23	Գրական ուղղությունները և դպրոցները համաշխարհային դասական գրականության և ազգային գրականությունների համատեքստում (վաղ կլասիցիզմից մինչև 20-րդ դարի 20-ական թվականներ). տիպաբանությունը, ընդհանրություններն ու առանձնահատկությունները	ՀՀ ԳԱԱ «Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ

24	«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հիմնադրման 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով «Կրթության և գիտության արդի հիմնախնդիրները»	«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ

2) N 2 հավելվածում երիտասարդ գիտնականների դպրոցների ցանկը լրացնել հետևյալ կետերով.

11	Հայ-գերմանական համատեղ դպրոցի «Արագացուցչային ֆիզիկայի կիրառական դասընթաց»	«Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ
12	Մոլեկուլային գենետիկական մոտեցումները՝ որպես կենսաբազմազանության գնահատման և մոնիտորինգի գործիք	ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ

ԱՐՏՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ

(պարտականությունները կատարող)